

Վերջապէս ի՞նչ է «Հայրենիքի կարօտը» պ. Ա.—Դօ-ի:

Պատկեր է իրական կեանքից, թէ տեսդենցիօզ գլուռածք, մի ցանկալի գաղափար-գաղթականների դարձը-խրախուսող: Դա չի որոշում: Պ. Ա.—Դօ-ն ինքն էլ չի նշանակել:

Փաթեթի վերջին երեսում կարդում ենք, «Նոյն կազմո-ղի-Մակեդոնիա-սպառուած»... և այս:

Ուրեմն մակաբերենք, որ սա էլ կազմած բան է:

Բասի նոր եւ տարօրինակ զործածութիւն:

Կազմում են կրօնի և այլ դասագրքեր, կազմում են համ-բակ գրողների համար ուղեցոյցներ, վերջապէս կազմում են ամեն տեսակ գրքեր... կազմարարները:

Իսկ շարլօն ձևերից, հատ ու կտոր գրաւիչ մօտիւներից, գեղեցիկ գաղափարներ բուրող վերնագրներից, մաշուած, ծած-ծմած տեսաներից, հոգեբանական սխալ երևոյթներից կազմել անձոռնի և սխալ բրօշիւրներ... Դրա համար էլ ջոկ կազմարա-րի ընդունակութիւն է հարկաւոր, որի արհեստանոցը գտնւում է երեան, պ. Ա.—Դօ-ի մօտ:

ԱՐԵԱՄ Տէ՛ր-ԽԱԶԱՏՐԵԱՆՑ

Երեւան

1. Das armenische Hymnarium. Studien zu seiner geschicht-lichen Entwicklung von Nerses Ter-Migaëlian, Archimandrit von Edschmiadsin. Leipzig 1905

Վերջին տասնամեակի ընթացքում մեր ճեմարանաւարտ կուսակրօնները Գերմանիայում աստուածաբանութիւն ուսա-նելով մի շատ գովելի սովորութիւն իւրացրին. Նրանք իրենց աւարտման շարադրութեան նիւթը փոխանակ ընդհանուր զի-տութեան շրջանից վերցնելու, ընտրում են հայոց եկեղեցու անցեալին կամ դաւանաբանութեան վերաբերեալ ինդիւներ և լուսաբանում հիմնուելով մեր ձեռագիր աղբիւրների ու օտար գիտնական հետազոտութիւնների վրայ:

Ան այսպիսի մի աշխատութիւն է ներսէս Տէ՛ր-Միքայէ-լեան վարդապետի «Das Armenische Hymnarium»=Հայոց շա-րակնոցը, որ նորերս լոյս է տեսել գերմաններէն լեզուով Լայպ-ցիդում:

Բարձրապատիւ հեղինակն այդ աշխատութեան մէջ պար-զում է՝ թէ ի՞նչ բան է այժմեան մեր շարակնոցը, թէ այժմեան շարակնոցը որքան հնութիւն ունի և թէ առաջ ինչպէս էր և վերջապէս՝ թէ ըստ եկեղեցական աւանդութեան հվեր են շա-

բականների հեղինակները։ Այս խնդիրները ցայժմ գիտնական հետազոտութեան և քննադատութեան չեին ենթարկուել և այսպիսով բարձր։ Ներսէս վարդապետի աշխատութիւնն առաջին փորձն է։ Մեր շարակնոցն իւր այժմեան ձևով կազմակերպուել է տասերեկերորդի վերջերից մինչև տասնևեօթերորդ դարի սկզբը։ տասերեկերորդ դարի վերջին երրորդից առաջ չեր կարող կազմուած լինել — ըստ հեղինակի —, որովհետեւ պարունակում է Վարդան վարդապետի († 1271 թ.), Յակոբ Կայոցի կաթողիկոսի († 1287 թ.) և Յովհաննէս վարդապետ Երզնկացու (մոտ 1250—1325 թ.) բանաստեղծութիւններն ոչ իբրև յաւելուած, այլ իրենց յարմար տեղի դասաւորութեամբ։ Միւս կողմից էլ Ռուկան վարդապետի 1664 թ. առաջին անգամ հրատարակած շարակնոցն իւր պարունակութեամբ և դասաւորութեամբ ըստ ամենայնի համապատասխանում է այժմ մեր ձեռքն եղած շարակնոցին, ուրեմն այդ հրատարակութիւնից յետոյ ոչ մի փոփոխութեան չէ ենթարկուել։ Հաստատապէս ընդունուած շարականների թիւը 1166 է. իսկ եթէ շատ մասերից բաղկացած օրհնութիւն շարականն իբրև ամբողջութիւն ընդունենք՝ կստանանք 1075 շարական։

Բարձր։ Ներսէս վարդապետի հետազոտութեան մասին այս համառօտ տեղեկութեամբ բաւականանալով՝ քննադատութիւնը թողնում ենք մամնագէտներին։ Յանկալի է, որ այս աշխատութիւնը լոյս տեսնէ նաև հայերէն լեզուով, որպէս զի մեղանում ևս կարողանան օգտուել այդ հետազոտութեան արդիւնքից։

## 2. ԱՄՊՐԵ. Ցաղեր. Վաղարշապատ 1905. էջ 32.։

Դարձեալ մի նոր բանաստեղծ։ և որովհետեւ ամեն մի բանաստեղծ անպատճառ ինքնուրոյն ու տարօրինակ բան պէտք է ունենայ, մեր նորագոյն բանաստեղծն էլ այն տարօրինակութիւնն ունի, որ չգիտէ՝ թէ արդեօք իւր «աղբէրը» «հայ» է, թէ «անհաւատ» (?) թուրք։

«Ա՛յ աշնան հաւքեր, տարաբաղդ հաւքեր,  
«Դալիս էք շարքով երկար, անընդհատ,  
«Արդեօք տեսե՞լ էք իմ թշուառ աղբէր,  
«Արդեօք հա՞յ է նա, թէ թուրք անհաւատ»։

(էջ 6):

Շարունակ գրւում է՝ թէ բառերը կուտակելով և միանը ման վերջաւորութիւններ յարմարեցնելով գրուածքը բանա-